**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2017 թվականի N 1700 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1499-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Կենդանիների, կենդանական ծագում ունեցող մթերքի, հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների, սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների ներմուծման, արտահանման, հանրապետության տարածքում փոխադրման համար անասնաբուժական ուղեկցող փաստաթղթեր, անվտանգության սերտիֆիկատներ և համապատասխանության տեղեկանք տալու կարգը, անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի, անվտանգության սերտիֆիկատների և համապատասխանության տեղեկանքի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 4-ի N 1241-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1499-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) N 1 հավելվածի 6-րդ կետի 4.1-ին ենթակետը «համար» բառից հետո լրացնել «, 5-րդ ձևն ունի պիտակ, որը մատակարարի կողմից լրացվում և տրամադրվում է իրացնողին, եթե վկայականում նշված սպանդանոցային ծագման տեղական արտադրության կենդանական

ծագման մթերքի և հումքի խմբաքանակն իրացվելու է տարբեր խմբաքանակներով և առաքումից առաջ հայտնի չէ իրացնողը կամ իրացման ենթակա քանակությունը: Պիտակը նույնականացվում է N 5 ձևի անասնաբուժական վկայականի հերթական համարակալման և յուրաքանչյուր պիտակին լրացնողի կողմից տրվող հերթական համարով:» բառերով.

2) N 1 հավելվածի 7-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«NN 1, 2, 3 և 5 ձևերի անասնաբուժական վկայականները լրացվում են առնվազն երկու օրինակից, որի մեկ օրինակը պահվում է անասնաբուժական ծառայությունում:».

3) N 1 հավելվածի 19-րդ կետի երկրորդ նախադասությունը «փաստաթղթերն» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն կարգի 19.1-ին կետով նախատեսված դեպքում,» բառերով.

4) N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 19.1-ին կետով.

«19.1. Անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերը, անվտանգության սերտիֆիկատները և համապատասխանության տեղեկանքը կարող են լրացվել, ներբեռնվել և տպվել էլեկտրոնային եղանակով անասնաբուժության բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգից՝ նախապես համակարգում գրանցվելու և մուտքի ծածկագիր ստանալու միջոցով».

5) հաստատել N 5 ձևի անասնաբուժական վկայականի պիտակը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 29
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
դեկտեմբերի 28 -ի N 1700 - Ն որոշման

# ՊԻՏԱԿ

## ՁԵՎ №5 ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ № XXXXXX/_

### Արտադրողի (սպանդանոցի) անվանումը

______________________________
Նշել իրավաբանական անձի անվանումը կամ
անունը, ազգանունը և գործունեության վայրը

### Իրացվող սպանդանոցային ծագման մթերք

______________________________ ____________
Նշել հատով կամ կիլոգրամով՝ ըստ կենդանատեսակի անվանման | սպանդի ամսաթիվը

### ՍՏԱՑՈՂԸ

______________________________
Նշել անունը, ազգանունը կամ անվանումը, գործունեության հասցեն

______________________ ____________
Ստացողի ստորագրություն | Ամսաթիվ

______________________ ____________
Մատակարարի անունը, ազգանունը | ստորագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ